


Ա.Պուսչին

ՏԵՐՏԵՐՆ ՈՒ ԻՐ ԲԱԼԻ  
ԾԱՌԱՆ





Ա. Ա. ՊՈՒՏԵՎԻՆ

1937 Տ ՀԱՅԻ ՀԱՅԱՍՏԱՆ

# ՏԵՐՏԵՐՆ ՈՒ ԻՐ ԲԱԼԴԻ ՇԱՌԱՆ

Թարգմ. Ա. Թ. ԽՆԿՈՑԱՆ

Նկարները Ա. ՂԱՐԻԲՅԱՆԻ

A 24134 7088 868



ՊԵՏԵՎԻՆ  
ՀԱՅԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊՈՒՏԵՎԻՆ ԲԱԺԻ  
ՑԵՐԵՎՈՆ  
1937


Խմբագիր՝ Առուք. Զ. ա. շ յ ա ն  
Տեխ. խմբագիր՝ Լ. Պ հ ա ն յ ա ն  
Արքագրիչներ՝ Հ. Մանուկյան յիշ Հ. Գոլովիստանյան  
Գլավլիին յիազոր Կ—4522, Հրամ. 4000  
Պատվեր 284, Տիրած 3000  
Պետրասի տպարան, Յերևան. II Կոունցիսի, 4

Մի ժլատ տերտեր —  
Հարուստ, տնատեր —  
Վաղ դնաց շուկա,  
Վոր գործը հոգա,  
Հետ դառնա տուն գաւ  
Ետ տեր ժլատին  
Պատահեց Բալդին,  
Ասավ. «որհնիր, տեր,  
Ի՞նչ կուզես, տերտեր»:  
— Կուզեմ մի ծառա,  
Շատ բան իմանա,  
Ապրի չոր հացով,  
Լինի խոհարար,  
Զիապահ, դուրգար.  
Շատ եժան վարձով:  
— «Ա՛ տեր, ինձ վարձիր,  
Կուզես քար բարձիր.  
Մի կլոր տարի  
Ինձ տանդ պահի.  
Թէ ուտիս, թէ պաս,  
Տուր ինձ լոկ սպաս.  
Ու տարվա վերջին  
Քո տանը միջին  
Թող միջամատով  
Յերեք հատ կըտտոց

Տամ քո ճակատով,  
Ահա իմ վարձը —  
Վերջացավ հարցը»:  
Տերտերը խորհեց,  
Ճակատը քորեց.

Կըտառցները իրա մեջ  
Բան չընաշվեց, ասավ՝ հեշ  
Կըտառց ել կա, կըտառց ել  
Յեվ մոռացվեն գուցե ել:  
Համաձայնեց պաշմանին  
Յեվ տուն բերեց ծառալին.

Ինչպես ցուց տվավ փորձը,  
Բաղդին գիտեր իր գործը.  
Արի յեր մարդը,  
Վարում եր արտը,  
Պահում եր նա ձին,  
Հասնում եր հնձին,  
Նա քիչ եր քնում,  
Շուտ եր վեր կենում,  
Շուկա յեր գնում,  
Տան պաշտը առնում,  
Տանը ջուր կրում,  
Ոջախը վասում,  
Վրան ձու խաշում,  
Խաշում ու կաղում,  
Յերբեք չեր վիճում:  
Հիացել եր իրիցկինը.  
Վրան ցավում եր աղջիկը.  
«Հալրիկ» կանչում տան փոքրիկը,  
Վոր նստում եր Բաղդու գիրկը:  
Տերտերը միտին  
Չեր սիրում նրան.




Յերբ հիշում եր Բալգու մատը  
Ճըքճըքում եր ծեր ճակատը:

Տարին անցնում ե որեոր,  
Իսկ տերտերը, մտաժոլոր,  
Վհչ ուտում ե, վհչ ել խմում,  
Տարվա վերջին ե սպասում:  
Ահա մի որ  
Խեղճ ու մոլոր  
Են քահանան  
Իրիցկնկան  
Խոստովանեց  
Ամեն մի բան.  
Իրիցկինը՝ «Լես թուլլ չեմ տա,  
Ա՛ տեր, Բալգին ճակատիդ տա.  
Յեկ զի՞ր նրան այնպես գործի  
Գոր նա իրա ուժը փորձի,  
Են գործն անել չկարենա /  
Ու ամոթով դատարկ դնա»:  
Աւրախացավ են տերտերը. —  
Իսկույն և եթ — հենց նույն որը  
Ասագ. «Բալգի, սատանեքը  
Դեռ չեն տվել տնորհնեքը,  
Գնա — ուզիր ապառիկա,  
Յերեք տարեն առնելիքս»:  
Բալգին մի հեզ  
Ծառալի պես  
Կեսը կամա,  
Կեսն ակամա,  
Յելավ գնաց ծովի քովը  
Թոկն վոլորեց, կախեց ծովը.  
Խիստ փոթորիկ ծովում հանեց,  
Ափը ափին տվեց խառնեց.

Մի քիչ հետո հանկարծ — ահա,  
Ծովից լելավ մի սատանա.  
— Ի՞նչ ես ուզում, Բալդի, մեղնից,  
Թոկդ քաշիր, հանիր ծովից:  
— Զե, ձեր ծովը յես կըխառնեմ  
Ու բոլորիդ գուրս կըհանեմ,  
Զեր վրալի ապառիկը,  
Իմ աերտերի առնելիքը  
Եսպես յերկար յերեք տարի  
Ի՞նչու համար դուք չեք բերի.  
— Հերիք խառնես ծովը, Բալդի,  
Զեռքիդ թոկը խնդրեն վայր դի.  
Շուտով կըտանք մենք քո հարկը  
Ես ա կըգա իմ թոռնիկը:  
Գնաց պապը. յեկավ թոռը,  
Յեկավ, տվավ գլխին զոռը.  
Մլավելով ինչպես կատուն,  
— Բարև քեզի, ասավ Բալդուն.  
Ես ի՞նչ կարդ ե,  
Ես ի՞նչ վարք ե,  
Քո ուզածը  
Ես ի՞նչ ճարկ ե.  
Ես ի՞նչ լուր ե,  
Մեզ չարերիս  
Ինչ տիսուր ե,  
Հեչ լսած կմ զոնե մեկը —  
Հարկ վճարեն սատանեքը.  
Ե՛, ինչ անենք, կուզես կըտանք  
Բայց մի պարնան չըմոռանանք.  
Մինչև ժողվի պապս հարկը,  
Բերի լցնի կաշե պարկը,  
Արի վազենք մենք միասին


Ծովի շուրջը. ճամբի կիսին  
Ով վոր հոգնի ու լետ ընկնի,  
Թող նա վոսկու պարկը տանի.  
Մի հոհոաց ետտեղ Բալդին  
Ծաղրի տալով չարի ճուտին.  
«Դու ով ես վոր, ալ անհեթեթ,  
Բալդին վազի քեզպեսի հետ.  
Քիչ սպասի թող լըղպորը,  
Գնամ բերեմ իմ լեզբորը»:  
Բալդին անտառ գնաց արադ.  
Բոնեց լերկու հատ նապաստակ  
Յեվ գցելով նրանց պարկը,  
Դարձավ լեկավ ծովի ափը.  
Հանեց մեկին ոլարկի միջից  
Ու բոնելով ջուխտ ականջից  
Ասավ չարին. «Վախկոտ ճուտիկ,  
Խոսքիդ տերն ես, արի մոտիկ.  
Առաջ վազիր գեռ լեզբորս հետ.  
Ի՞նչ ես նայում վրան խեթ-խեթ.  
Դեհ մեկ, լերկուս, լերեք՝ վազեք,  
Դուք իրարի լավ կըսազեք»,  
Ու վազեցին. նապաստակը  
Փախավ անտառ, մտավ ծակը.  
Իսկ սատանեն՝ տնկած դունչը՝  
Շրջան տալով ծովի շուրջը  
Քրտնաթաթախ և վազե վազ,  
Շունչը կտրած և հազիվ հաղ,  
Բարին տալով իր մի վոտը՝  
Իրան գցեց Բալդու մոտը.  
Յեվ ինչ տեսավ են լղպորը—  
Բալդին շոյում ե լեզբորը.  
«Ապրի, ապրի իմ մոր բալեն,



Z. Merezhukin 34

Խիստ հոգնել ե զիլ վաղելեն»:  
Սատանեն եր՝ փոքրիկ ճուտը,  
Փորին տալով լերկար տուտը,  
Ասավ. — Գնամ բերեմ հարկը  
Վոր լցըել ե պապս պարկը:  
Դնաց թոռը պատմեց պապին,  
Թե հաղթվեց ծովի ափին:

Բալդին նորից  
Թոկն վոլորեց,  
Կախեց ծովից,  
Խիստ փոթորկից  
Զայներ լեկան  
Ծովի տակից:  
Մի ալ հնարք գտավ պապը  
Յեվ ուղարկեց թոռին ափը.  
Թոռը լեկավ, ասավ Բալդուն.  
— Հերիք խառնես մեր ծովը դռւն,  
Ես ինչ կարդ ե,  
Ես ինչ վարք ե,  
Քու ուղածը  
Ես ինչ հարկ ե.  
Ես ինչ լուր ե,  
Ինչ տխնւր ե,  
Ինացած կա դոնե մեկը —  
Հարկ վճարեն սատանեքը.  
Ե, վոր կուղես, մենք ել կրտանք  
Բաց մի պարման չըմոռանանք:  
Մեզնից հեռու — գետնի վրա,  
Վրտեղ կուղես, նշան արա,  
Չեռքիս փալտը ով մեղանից,  
Դեն շպրտի են նշանից,  
Թող նա տանի վոսկու պարկը —



17

Յերեք սարեն ժողված հարկը:  
Հը, լովեցար,  
Տես վախեցար  
Թեղ ջարդի  
Վախկոտ Բալդի:—  
«Հա, վախեցա թես ջարդի.  
Հլա լեզվին ես լակոտի,  
Հլա մտիկ պուճուր շանը:  
Ա՛յ, Են ամպն ե իմ նշանը:  
Փայտդ ենուեղ յես կընետեմ.—  
Ելնուհետեւ յես ձեզ գիտեմ...  
Սատանեն եր՝ փոքրիկ ճուտը,  
Փոքրին տալով լերկար տուտը,  
Լեղապատառ ընկավ ծովը,  
Շունչը առավ պապի քովը  
Յեվ յեղածը ծովի ափին  
Նա կցկտուր պատմեց պապին:

Բալդին նորից  
Թոկն վոլորեց  
Կախեց ծովից,  
Խիստ փոթորկից  
Չայներ յեկան  
Խոր հատակից:  
Դարձյալ յեկավ են լղազորը.  
— Ա՛յ անիծվի ես մեր որը,  
Բալդի, ունեմ և մի նոր բան...  
«Սուս, կաթնակեր, չքոտ, անբան,  
Հերթն իմն ե, ասավ Բալդին  
Են աներես չարի ճուտին.  
Տեսնում ես դու՝ են մատակ ձին  
Արածում ե ջոկ, առանձին.  
Յեթե նրան բարձրացընես,

Չեռքերովդ կես վերսատ տանես,  
Չեզ կըբաշխեմ ետ ձեր հարկը,  
Դատարկ կերթամ մեր աշխարհքը»:  
Սատանեն եր ետ խոսքի հետ  
Հասավ ձիուն, իսկուն և եթ  
Առավ նրան իր ձեռներին.  
Ջոռը տալով ջուխտ ծնկներին.  
Բայց լերկու քայլ գեռ չըփոխած,  
Փովեց գետնին, սաստիկ դողաց.  
«Ժուլիկ, մուլիկ չար սատանա.  
Վրադ հոգոց միվ կըկարդա,  
Վեր կաց, վեր կաց, չարի ճուտիկ,  
Աչքերդ բաց ու ձին մտիկ,  
Դու չըտարար ինձ ձեռներով,  
Յես կըտանեմ ես վոտներով».  
Ասավ Բալդին ու ձին հեծավ,  
Վոտների մեջ նրան առավ,  
Մի վերսատեղը իսկուն անցավ,  
Փոշին լելավ, դուման դառավ.  
Ետաեղ դարձլաւ չարի ճուտը՝  
Զընասկանալով Բալդու սուտը,  
Լեղապատառ ընկավ ծովը,  
Շունչը առավ պապի քովը,  
Իր տեսածը ծովի ափին  
Նա կըցկըտուր պատմեց պապին:  
  
Բալդին նորից  
Թոկն վոլորեց,  
Կախեց ծովից,  
Խիստ փոթորկից  
Զայներ լեկան  
Խոր հատակից.  
Հնարք չըկար. սատանեքը

Հավաքեցին իրանց հարկը,  
Շալկած բերին Բալդու մոտը  
Մեզա գալով ընկան վոտը,  
— Առ ուզածդ, դնա, ասին,  
Միայն հանգիստ առւը մեր գասին։

Բալդին լեկավ տնքտնքալով,  
Վոսկին մեջքին զնզգնգալով։  
Վայ իմ որին՝ տերտերն ասավ, —  
Թռավ տեղից. տեղ շըգտավ,  
Կնկա փեշի տակը մտավ,  
Բալդին նրան փեշի տակից  
Քաշեց հանեց՝ բռնած միրքից.  
Ասավ. «Բերի լես քո գանձը»՝  
Են տեր ժլատը  
Բռնեց ճակատը  
Բալդին ոի հետ կըտտացրեց,  
Նրան ոծորքը թոցրեց.  
Մի անգամ ել կըտտացրեց,  
Լեզուն բերնում լոեցրեց.  
Վերջն եւ վոր չըկտտացրեց,  
Խեղճ տերտերին գժվացրեց.  
Ժլատ ծերուկ, ես քեզ մի դաս,  
Եժանութլան ել ման չըգնա.  
Ասավ Բալդին ուրախ, ուրախ  
Յելավ գնաց անվարձ, անհախ։

1831


Որո՞,



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0002303



169

ЦЕНА

24134

4120504

054.

А. С. ПУШКИН  
СКАЗКА О МЕРТВОЙ ЦАРЕВНЕ И СЕМИ БОГАТЫРЯХ  
ГИЗ АРМ. ССР ЕРЕВАН

Проб. 1940г.